Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը.**

   Համբարձում Մաթևոսյան

2. **Զբաղեցրած պաշտոնը.**

   Շրջակա միջավայրի նախարար

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**

   2025 թվականի հոկտեմբերի 1-ից 2-ը Արաբական Միացյալ Էմիրություններ (Դուբայ)

4. **Հրավիրող կողմը.**

   Դուբայի էլեկտրաէներգիայի և ջրի վարչություն (DEWA), Դուբայի Էներգետիկայի բարձրագույն խորհուրդ և Համաշխարհային կանաչ տնտեսության կազմակերպություն (WGEO)

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

   Մասնակցություն՝ Կանաչ տնտեսության 11-րդ համաշխարհային գագաթաժողովին (WGES): WGES-ը կանաչ տնտեսությանը նվիրված համաշխարհային գագաթաժողովներից մեկն է, որը միավորում է քաղաքականության մշակողներին, ձեռնարկատերերին և քաղաքացիական հասարակությանը, փորձագետների՝ խթանելու կանաչ տնտեսությունը, մշակելու կայուն զարգացման օրակարգ և հասնելու ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակներին:

6. **Քննարկված թեմաները**

   Մասնակցելով Կանաչ տնտեսության 11-րդ համաշխարհային գագաթնաժողովին՝ ներկայացրել եմ երկրի տեսլականն ու քայլերը կանաչ և կայուն ապագայի կառուցման ուղղությամբ՝ նշելով, որ «Հայաստանի համար կանաչ տնտեսությունը ոչ միայն քաղաքական ուղղություն է, այլև զարգացման նոր մոդել, որը միավորում է բարեկեցությունը, բնապահպանական կայունությունն ու սոցիալական ներառականությունը: Վերջինս երկրի համար կենսական անհրաժեշտություն է. 2021–2026 թթ. կառավարության ծրագրում այն հռչակվել է որպես ռազմավարական առաջնահերթություն»:

   Հանդիպման ընթացքում անդրադարձ է կատարվել մասնավորապես.

   - Հայաստանում շրջանաձև տնտեսության լուծումներին,
   - կայուն շարժունակության խթանմանը,
   - կանաչ ներդրումների իրականացման համար ֆինանսական մեխանիզմների ներդրմանը:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը. Հանդիպումների ժամանակ անդրադարձ է կատարվել նաև.**

- Կլիմա և կենսաբազմազանության պահպանում,
- Կլիմայական գործողություններ. Հայաստանի Հանրապետության քայլերն ուղղված կլիմայական մարտահրավերների մեղմմանը,
- «Կենսաբազմազանության մասին կոնվենցի ույի 17-րդ համաժողովի անցկացման, կազմակերպչական աշխատանքներ, ինչպես նաև երկրի տեսլականի ներկայացում,
- կլիմայական օրակարգի խթանում և կայուն զարգացման առաջնահերթություններ, ֆինանսական, քաղաքական պարտավորություններ կլիմայի փոփոխության հարմարվողականություն, մեղմում և կանաչ աճ,
- Համագործակցության խորացում տարածաշրջանային առաջնահերթությունների շուրջ, կլիմայական գործողությունների ընդլայնում, համագործակցության ընդլայնում Աֆրիկյան երկրների և Փոքր կղզի զարգացող պետությունների ղեկավարների հետ,

Միջոցառման ընթացքում ելույթ եմ ունեցել՝ ներկայացնելով Հայաստանի առաջնահերթությունները COP17-ի նախագահության շրջանակում: Տեղեկացրել եմ, որ մինչ COP17-ը, Երևանում նախատեսվում է կազմակերպել տարածաշրջանային երկխոսություն, տեխնիկական խորհրդակցություններ և pre-COP միջոցառումներ:

- Հանդիպել եմ նաև Արաբական Միացյալ Էմիրությունների Էներգետիկայի և ենթակառուցվածքների նախարարի հետ, անդրադարձ ենք կատարել երկկողմ հանդիպման ընդլայնմանը, ներկայացրել եմ Հայաստանի Հանրապետության առաջնահերթությունները COP17 նախագահության շրջանակում,
- Հանդիպել եմ ԱՄԷ Շրջակա միջավայրի և կլիմայական փոփոխությունների նախարար՝ տիկին Ամնա ալ Շամսիի հետ, քննարկել ենք 2026 թվականին Հայաստանում կայանալիք Կենսաբազմազանության մասին կոնվենցիայի 17-րդ կողմերի համաժողովի (COP17) նախապատրաստական աշխատանքները,
- Հանդիպել եմ Մոլդովայի էներգետիկայի նախարարին, որի հետ քննարկել ենք COP17 նախապատրաստական աշխատանքների կազմակերպման գործընթացը, ինչպես նաև երկկողմ համագործակցության ընդլայնմանն ուղղված հարցերը:

Համբարձում Մաթևոսյան

14.10.2025թ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՆԽԱՎՃԱՐԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը -***շրջակա միջավայրի նախարարություն***
2. Գործուղման մասին իրավական ակտի համարը –***ՀՀ վարչապետի 23.09.2025թ. N 844-Ա որոշում***
3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը)-***Համբարձում Մաթևոսյան- շրջակա միջավայրի նախարար***
(*թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում*)
4. Գործուղման վայրը- ***Արաբական Միացյալ Էմիրություններ (Դուբայ)***
5. Գործուղման ժամկետները – ***2025թ. սեպտեմբերի 30-ից հոկտեմբերի 3-ը***
6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝ ***2025 թ. պետական բյուջեով շրջակա միջավայրի նախարարությանը հատկացված միջոցների հաշվին***
1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(*թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն*)
_ճանապարհածախս, գիշերավարձ
2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(*ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան*)
(*ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը*)
✓ □ ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը
□ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		***Համբարձում Մաթևոսյան***	**Ընդամենը** (դրամ)
Ճանապար-հածախս	Ավիաճառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս)		
	Ավիատոմսի արժեքը (դրամ)		
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)		
	Վճարը 1 օրվա համար		

	(դրամ)		
	Օրերի քանակը		
	Ընդամենը (դրամ)		
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)	116 $	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	44395	
	Օրերի քանակը	4	
	Ընդամենը (դրամ)	177580	177580
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար		
	Մուտքի արտոնագրի վճար		
	Այլ ծախսեր (*նկարագրել*)		
Ընդամենը ծախսեր (դրամ)		177580	177580

25.09.2025թ. ՀՀ ԿԲ հաշվարկային փոխարժեք՝ 1 $ = 382.72 ՀՀ դրամ

Գլխավոր քարտուղար՝ Ս. Աթանեսյան

25.09.2025թ.